



Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն հրավիրում է համապատասխան փորձառություն ունեցող և շահագրգիռ ընկերություններին ներկայացնել հետաքրքրության հայտեր ներքոհիշյալ ծառայություններն իրականացնելու մրցույթին մասնակցելու համար՝

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ՏՏ միջավայրի՝ սերվերային համակարգի, ցանցային հանգույցների, համակարգչային տեխնիկայի, տպող և պատճենահանող սարքերի, հեռախոսային զանգերի կենտրոնի, ֆիքսված և բջջային կապի ցանցի, տեսահսկման և ձայնաագրանշանային համակարգերի, օպերացիոն համակարգերի, ծրագրային ապահովման սպասարկում ՀՀ տարածքում՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ շուրջ 70 հասցեներում, ներառյալ սարքավորումների մոնտաժ, նորոգում, արդիականացում:

Սարքավորումների և ծրագրային ապահովման հակիրճ նկարագիրը

Սերվերային մեքենաներ, տվյալների պահոցներ, անխափան սնուցման սարքեր, գաղտնագրող երթուղիչներ, ցանցային սարքավորումներ, համակարգիչներ, նոութբուքեր, պլանշետներ, սմարթֆոններ, լազերային և թանաքաշիթային տպիչներ, բազմաֆունկցիոնալ սարքեր, տեսախցիկներ, ձայնաագրանշանային համակարգեր և այլ տարատեսակ հարակից սարքավորումներ, վիրտուալիզացիայի համակարգեր, օպերացիոն համակարգեր, տեքստային և գրաֆիկային պրոցեսորներ, ընկերության ներքին թողարկման ծրագրեր:

Շահագրգիռ ընկերությունները պետք է բավարարեն ներքոհիշյալ պայմանները.

- Առնվազն մեկ նմանատիպ պայմանագրի իրականացման փորձառություն ամբողջ Հայաստանի տարածքով՝ վեջին 4 տարիների ընթացքում: Հայտատուն պետք է ներկայացնի համապատասխան պայմանագրերը, կատարված աշխատանքների բնութագրերը և ավարտական ակտերը,
- Նմանատիպ աշխատանքների իրականացման համար որակավորված անձնակազմ առնվազն 18 աշխատակից՝ այդ թվում սերվերային համակարգերի և ցանցային ադմինիստրատորներ, տեխնիկներ, մոնտաժողներ, ծրագրավորման մասնագետներ, աշխատանքի անվտանգության գծով ինժեներ, տեսահսկման համակարգերի որակավորված մասնագետ և օժանդակ աշխատակազմ:
- Հայտատուն պետք է ներկայացնի բոլոր հավաստող փաստաթղթերը՝ ինքնակենսագրականները, վկայականները և արտոնագրերը:
- Նշված ծառայությունների մատուցման համար պահանջվում է առնվազն 7-8 ավտոմեքենա՝ հագեցված անհրաժեշտ ողջ գործիքակազմով:

Ծառայությունների սկիզբը նախատեսված է 2018թ. փետրվարի 01-ից՝ երեք տարի ժամկետով:

Շահագրգիռ ընկերությունները պետք է տրամադրեն նշված ծառայություններն իրականացնելու համար համապատասխան որակավորում, ֆինանսական և տեխնիկական

կարողություններ, աշխատակազմ ունենալու վերաբերյալ բավարար տեղեկատվություն /ծանուցագրքեր, կատարված նմանատիպ աշխատանքների բնութագիր, նշված բնագավառի փորձի և համապատասխան որակավորում ունեցող աշխատակազմի վերաբերյալ տեղեկություններ, կենսագրական տվյալներ, ֆինանսական տվյալներ և այլն/:

Լավագույն փորձառություն ունեցող ընկերությունը կհրավիրվի ներկայացնելու ֆինանսական առաջարկ:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ «Վեոլիա Ջուր» ընկերությունից աշխատանքային օրերին ժ. 09:00–17:00 ներքոհիշյալ հասցեով:

Հետաքրքրության արտահայտման հայտերը պետք է ներկայացվեն ստորագրված, կնքված և փակ ծրարով կամ էլեկտրոնային եղանակով ստորև նշված էլ. փոստին / հասցեով, ոչ ուշ, քան 2018թ. հունվարի 16-ը, ժամը 15:00:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Հ, 0025, Երևան, Ադոնց 6/1,
Հեռախոս՝ (374 11) 54-26-95, 077 244 222,
Էլեկտրոնային փոստ՝ procurement@vjur.am